## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## *ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15-2019 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի արդյունքում 2018թ հունվարի 29-ին կնքված պայմանագրում 2019թ հունվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Երկարաժամկետ պայմանագիր, կնքված 2018-2023թթ. ժամանակահատվածի համար:

Փոփոխության նկարագրություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պահպանություն:

Համաձայնագրի գինը կազմում է 104 064 000 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին օրենք /ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշում/:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արտակ Մկրտչյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15-2019**
**Պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման**

**ք. Երևան** **<< 23 >> հունվարի 2019թ.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս.Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի և <<Ճամբարակի ՃՇՇԶ>> ԲԲԸ-ի կոնսորցիումը, ի դեմս <<Քյավառ Սերվիս>> ՍՊԸ-ի Ընկերության տնօրեն Ա.Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2018թ. հունվարի 29-ին կնքված ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2019թվականի համար՝ համաձայն սույն Համաձայնագրի N 3 հավելվածի:

1.4 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 104 064 000 (մեկ հարյուր չորս միլիոն վաթսունչորս

հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2019 թվականի համար սույն համաձայնագրով կապալառուին կտրամադրվի կանխավճար՝ համաձայնագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր գումարի մինչև 10 (տաս) տոկոսի չափով. Պայմանով, որ Կապալառուն նախապես Պատվիրատուին կներկայացնի երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով:

2.3 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2.4 Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2.3 Դեկտեմբեր ամսվա համար նախատեսված վճարումները կատավում է մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված վճարումների վերջնաժամկետը:

**3. Պայմանագրի 2.4 կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.**

<<2.4.4 Կատարողը պարտավոր է.

Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել.

1. կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրասպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին պատահարի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից>>:

**4. Այլ պայմաններ**

4.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1,2 և 3 հավելվածները հանդիսանում են

սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | |
| --- | --- | --- |
| ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3<br>Կենտրոնական Գանձապետարան<br>Հ/Հ 900011012136<br>ՀՎՀՀ 02565518<br><br>/ստորագրություն/ | «Քյավառ Սերվիս» ՍՊԸ<br>ՀՀ ք. Գավառ, Կաhիրեի 7<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Գավառ մ/6<br>Հ/Հ 1150016412532566<br>ՀՎՀՀ 08420926<br><br>/ստորագրություն/ | «Ճամբարակի ՃՇՇԳ» ԲԲԸ<br>ՀՀ, Գեղարքունիքի մարզ<br>ք. Ճամբարակ, Գարդմանի 6<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 11500467[illegible]<br>ՀՎՀՀ 08100179<br><br>/ստորագրություն/ |

Հավելված 1
<<23>> հունվարի 2019թ. կնքված
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15-2019 համաձայնագրի

# Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Գնումը՝ 2019թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| [redacted] | | | | | | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | 37,443,840,0 | 25,766,640,0 | 22,903,680,0 | 17,949,840,0 | 104,064,000,0 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 8/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Գավառ, Կաhիրեի 7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Գավառ մ/ճ
Հ/Հ 1150016412532566
ՀՎՀՀ 08420926

/ստորագրություն/

«Ճամբարակի ՃՇՇԳ» ԲԲԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ
ք. Ճամբարակ, Գարդմանի 6
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004674137
ՀՎՀՀ 08100179

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2
<<23>>հունվարի 2019թ. կնքված
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15-2019 համաձայնագրի

**Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց**

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | 33,996,019,0 | 33,996,019,0 | 33,996,019,0 | 60,338,839,0 | 60,338,839,0 | 60,338,839,0 | 81,725,150,0 | 81,725,150,0 | 81,725,150,0 | 104,064,000,0 | 104,064,000,0 | 104,064,000,0 | 104,064,000,0 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Գավառ, Կաhիրեի 7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Գավառ մ/ճ
Հ/Հ 1150016412532566
ՀՎՀՀ 08420926

/ստորագրություն/

«Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ
ք. Ճամբարակ, [illegible] 6
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004674137
ՀՎՀՀ 08[illegible]9

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
<<23>> փետրվարի 2019թ. կնքված
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15-2019 համաձայնագրի

**Գավառի տարածաշրջան**

2019 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 7 | 8 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ | | | | | | | |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ12,7-կմ49,0 | Միջպետական II-IV | 36.30 | | Լավ | 36.30 | 852.000 | 30927.600 |
| Նորատուսի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.50 | | Լավ | 2.50 | 852.000 | 2130.000 |
| Հ39, Մ10-Գավառ-Մ10 կմ 0-կմ21 | Հանրապետական II-IV | 21.00 | | Լավ | 16.00 | 808.800 | 12940.800 |
| Հ39, Մոտեցում Գավառի օդանավակայանի | Հանրապետական II-IV | 2.00 | | միջին | 2.00 | 403.200 | 806.400 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ն կմ 0-կմ 2,0 | | | | | | | |
| **Ընդամենը** | | 61.80 | | | 56.80 | | 46804.800 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ **ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ** | | | | | | | |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ12,7-կմ49,0 | Միջպետական II-IV | 36.30 | Լավ ՄԼ(I) | Միջին | 6.00 | 692.400 | 4154.400 |
| | | | Բավարար ՄԲ(II) | Միջին | 30.30 | 1482.000 | 44904.600 |
| Նորատուսի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.50 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 2.50 | 1482.000 | 3705.000 |
| Հ39, Մ10-Գավառ-Մ10 կմ 0-կմ21 | Հանրապետական II-IV | 21.00 | Լավ.ՀԼ(I) | Լավ | 4.00 | 963.600 | 3854.400 |
| | | | Բավարար ՀԲ(II) | Բավարար | 0.50 | 1281.600 | 640.800 |
| **Ընդամենը** | | 59.80 | | | 43.30 | | 57259.200 |
| **Ընդամենը Գավառի տարածաշրջանով** | | | | | | | 104064.000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Գավառ, Կահիրեի 7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Գավառ մ/ճ
Հ/Հ 1150016412532566
ՀՎՀՀ 08420926

/ստորագրություն/

Կ.Տ.

«Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ
ք. Ճամբարակ, Գարդմանի 6
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004674137
ՀՎՀՀ 08100179

/ստորագրություն/

Կ.Տ.

## ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01

ք. Երևան «25» դեկտեմբեր 2017թ.

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն, այսուհետև՝ «Գործընկեր-1», ի դեմս ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Ճամփարակի ՃՇՇԳ» ԲԲԸ-ն, այսուհետև՝ «Գործընկեր-2», ի դեմս ընկերության տնօրեն Ա. Քոչարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ միասին նաև՝ «Կողմեր») մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերը միացնում են իրենց ավանդները և պարտավորվում են առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ (կոնսորցիումով)՝ շահույթ ստանալու համար՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15 ծածկագրով բաց մրցույթին (այսուհետև՝ ընթացակարգ) համատեղ մասնակցելու և հաղթելու (ընտրված մասնակից ճանաչվելու) դեպքում ընթացակարգով նախատեսված, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները համատեղ կատարելու նպատակով:

1.2 Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

1.2.1 Գործընկեր-1-ն՝ Տեխնիկական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, գործնական համբավ և կապեր:

1.2.2 Գործընկեր-2-ն՝ Մասնագիտական կարողություններ, տեխնիկական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, ֆինանսական միջոցներ, փորձառություն, գործնական համբավ և կապեր:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գնման ընթացակարգին մասնակցելու և N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2017/15 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով նախատեսված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու նպատակով.

ա) Գործընկեր-1-ն ապահովում է հրավերով նախատեսված՝

1) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի առկայությունը,

2) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի առկայությունը:

Գործընկեր-2-ն ապահովում է հրավերով սահմանված՝

1) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի առկայությունը,

2) ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշների առկայությունը, այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը,

3) հայտի ապահովումը,

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի առկայությունը:

5) մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշի առկայությունը:

### 2. Ընդհանուր գործերը վարելը

2.1. Սույն պայմանագրով ընդհանուր գործերը վարում է, այդ թվում՝ աշխատանքները իրականացնում է և պայմանագրի շրջանակներում առկա փաստաթղթերը կնքում և ստորագրում է Գործընկեր-1-ն:

2.1.1 երրորդ անձանց հետ հարաբերություններում գործարքներ է կնքում Գործընկեր-1-ը:

2.2. Կողմերի համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը վարում է Գործընկեր 1-ը, այդ թվում հաշիվ-ապրանքագրերը ներկայացվում և պայմանագրի շրջանակներում վճարումներն իրականացվում են Գործընկեր 1-ին:

2.3. Կողմերից յուրաքանչյուրն պարտավորվում է ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

### 3. Շահույթի բաշխումը

3.1. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է Կողմերին՝ համաձայն յուրաքանչյուր կողմի մատուցած ծառայության:

### 4. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև N ՏԿՆ-ՀԲՄԱԾՁԲ-2017/15 ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

4.2. Սույն պայմանագիրը կարող է դադարել որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝

4.2.1. անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու.

4.2.2. սնանկ ճանաչելու.

4.2.3. սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու դեպքում:

4.3. Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծելու դեպքում:

### 5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5.2 Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի միջև գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով: N ՏԿՆ-ՀԲՄԱԾՁԲ-2017/15 ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում մինչև պայմանագրի կնքումը Կողմերի միջև կարող է կնքվել լրացուցիչ համաձայնագիր, պայմանագրով նախատեսվելիք դրույթներից բխող Կողմերի հարաբերությունների կարգավորման նպատակով: Լրացուցիչ համաձայնագիրը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

### 6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գործընկեր-1 | Գործընկեր-2 |
|---|---|
| «Քյավառ Սերվիս» ՍՊԸ | «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ |
| ՀՀ ք. Գավառ, Կաhիրեի 7 | ՀՀ ք. Ճամբարակ, Գարդմանի 6 |
| «Յունիբանկ» ԲԲԸ Գավառ մ/6 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 24134001842300 | Հ/Հ 115004674137 |
| ՀՎՀՀ 08420926 | ՀՎՀՀ 08100179 |
| տնօրեն Ա. Մարգսյան (ստորագրություն) Կ.Տ. | տնօրեն՝ ... Զաքարյան (ստորագրություն) Կ.Տ. |